

626 աս
2050-ա







ՍԲ ԹԱԴԷՈՍ.

ՍԲ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ.

# ԽՈՐՀՐԴԱ ՏԵՏՐ

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ Առաքելութեան Եկե-
ղեցւոյս Հայաստանեայց:

Յամի Տն 1794. Հոկտեմբերի 20.

՚Ի տպարանի և հրամանաւ Հիւսիսայնակ
ազգին Հայոց Առաջնորդ Տն Յովսեփայ
Պատկազգեայ Արղութեան Արք Եպիսկ.

՚Ի յիշատակ Պանծալւոյ Տեառն՝ ՚ի Սարդարի Քնեազէր
Զաւրավարին Պոյտեմա Իշխան Աղայ Յօհանջանեան
Գիէրասեան, որոյ արդեամբքն տպեցաւ:

՚Ի Սբ Խաչ Վանքն՝ որ ՚ի Նորն

ՆԱԽԻՋԵՒԱՆ.



ՍԲ ԻՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ.



ՍԲ ՄԵՍՐՈՊ.







ՏՐԴԱՏ.

ՍԲ ՅՕՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.

8776/57
626

264

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Օրհնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել։

Պարտի այսպէս խոնարհութեամբ զգեստաւորիլ: Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր զգեստքն են պատարագի:
Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Ասասցեն սաղ. Սաղմոս ՃԼԱ Կցորդ:

ՔԱՀԱՆԱՅՔ քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն. փոխ:

Յիշեա Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա.

Որպէս երդուաւ Տեառն. և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ:

Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտևանաց իմոց. կամ հանգիստ երանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ.

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց:

Մտցուք 'ի յարկս նորա. երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի Տէր 'ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութեան քո:



Երիցունք քո զգեցցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն Դաւթի ծառայի քո. մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն. և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից. և զաղքատս սորա լցուցից հացիւ:

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն. և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջիւր 'ի Դաւիթ. պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ:

Թշ[illegible]ամ

Թշնամեաց սորա զգեցուցից զա-
մօթ․ և ՚ի վերայ նորա ծաղկեսցի
սրբութի՛ւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն Սրբոյ․ Այժմ և՛՛։

Եւ՛ քարոզեսցէ Սարկաւագն․

Եւ՛ ևս խաղաղութե՛ զտէր աղա-
չեսցուք։

Խնդրեսցուք Հաւատով միաբա
նութե՛ ՚ի տնէ, Զի զողորմութե՛
զշնորհս իւր արասցէ ՚ի վ՛ե մեր․

Ամենակալ տր աձ մեր, Կեցուս
ցէ Եւ՛ ողորմեսցի։

Եւ՛ Ասասցեն Երկոտասան Տէր ողորմեայ։

Ով սրբազան պատարագիս Յի
շեա՛ Յաղօթս Քոյս Զմատա-
կարար Գործարանիս։
Եւ՛ զհոգիս Ննջեցելոց նորին
՚ի Քո Յն։



Աղօթք Առանձնական Պատարագիչ Քահանային
Յառաջ քան Զգեստաւորելն։

# ՈՐ ԶԳԵՑԵԱԼ ԵՍ ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ

տէր մեր Յս Քս։ Անճառելի խոնարհութբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի եւ զարդարեցեր զեկեղեցի քո սբ։ Տէր ամենակալ որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ։ Արժանի արա եւ զիս ՚ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո։ Որ համարձակիմ եւ մերձենամ ՚ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զա՛մ ամբարշտութիւն մերկացայց որ է հանդերձ պղծութե եւ զարդարեցայց լուսով քով։ Ընկեա՛ յինէն զչարիս իմ, եւ թօթափեա՛ զյանցանս իմ։ Որպ զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ՚ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ՚ի պաշտօն սրբութեանց քոց, ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուէրանս քո։ Զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն։ փառաւորել զքեզ Քս որ բարձեր զմեղս ամենեցուն։ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց եւ քեզ բարերարիդ վայելէ փառք յաւիտ՛։

Եւ մատուցեն Սարկաւագունքն՝ Զգեցու-
ցեն նմա զՀանդերձսն ասելով. Եւ եւս խաղա-
ղութե՛ : Քահանայն Օրհնութի՛ Եւ յետ օրհ-
նութեանն՝ դիցէ յառաջ զխոյրն 'ի գլուխն եւ
ասասցէ :

# ԴԻՐ ՏԷՐ ՍԱՂԱ-

ւարտ փրկութեան 'ի գլուխ
իմ, պատերազմել ընդ զօրութիւնս
թշնամւոյն :

Շնորհօք տեառն մերոյ յի՛ քի՛
որում վայե՛՛ :

Շապկին :

Զգեցո՛ տէր ինձ հանդերձ փրկու-
թե՛ : եւ պատմուճան ուրախութե՛ :
Եւ՛ շուրջ պատեա՛ զ զգեստուս
փրկութեան : Շնորհօք :

Փող Ուրարին :

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զար-
դարութի՛ : Եւ՛ սրբեա՛ զսիրտ իմ
յա՛մ աղտեղութե՛ մեղաց : Շնոր՛՛ :

Գօտւոյն :

Շուրջ պատեսցէ կամար հաւա-
տոյ զմէջս սրտի իմոյ եւ մտացս :
Եւ՛ շիջուսցէ 'ի սոյանէ զխորհուր-
դըս աղտեղիս : Եւ՛ զօրութի՛ շնոր-
հաց քոց յա՛մ ժամ բնակեսցի 'ի
սմա : Շնորհօք :

Բազպան յաջ ձեռին :

Տուր տէր զօրութի՛ աջոյ ձե-
ռին իմոյ, եւ լուա՛ զա՛մ աղտեղու-
թի՛ս իմ : Որպէս զի կարող լինի-
ցիմ սպասաւորել քե՛զ անախ-
տութ հոգւոյ եւ մարմնոյ Շնոր՛՛ :

Բազպան յահեակ ձեռին :

Տուր տէր զօրութի՛ ձախոյ ձե-
ռին իմոյ, եւ լուա՛ զա՛մ աղտեղու-
թի՛ս իմ : Որպէս զի կարող լինի-
ցիմ սպասաւորել քե՛զ անախ-
տութ հոգւոյ եւ մարմնոյ : Շնոր՛՛ :

Վակասին :

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զար-
դարութի՛ : Եւ՛ սրբեա՛ զսիրտ իմ
յա՛մ աղտեղութե՛ մեղաց Շնոր՛՛ :

Նափորտին որ է շուրջառ :

ՏԷՐ ողորմութե՛ քով զգեցո՛ ինձ
զգեստ պայծառ եւ պատրաստեա՛ ընդ-
դէմ ներգործութե՛ չարին : Զի
արժանի եղէց փառաւորել զքո
փառաւորե՛լ անունդ : Շնորհօք :

Յետ զգեստաւորելոյ սրբազան
զգեստուքն ասէ :

Ցնծասցէ անձն իմ 'ի տէր զի
զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՛
եւ պատմուճան ուրախութե՛ : իբրեւ
փեսայի եդ ինձ պսակ : եւ որպէս
զհարսն զարդու զարդարեաց զիս :
Շնորհօք :

Խաղ

Թաշկինակին:

Սրբեա տէր զձեռս իմ յա՟մ աղտեղութենէ մեղաց. Շնորհօք տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի:

Եւ յետոյ եկեսցեն առաջի սեղանոյն: Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով:
Սաղմոս. ԻԵ. կց:

Լուացից սրբութեամբ զձեռս

Սարկաւագն փոխ:

Դատ արա ինձ տէր զի ես անմեղու'':

Քահանայն:

Եւ վասն սրբուհւոյ ա՟ծա'':

Սարկաւագն.

Սուրբ զա՟ծածինն և զամենայն ս՟ս բարե'':

Քահանայն:

Ընկալ տէր զաղաչանս մեր: Խոստովանիմ առաջի ա՟յ և սրբուհւոյ ա՟ծածնին. և առաջի ա՟մ սրբց. և առաջի ձեր հարք և եղբարք զա՟մ մեղս զորս գործեալ եմ, Քանզի մեղայ խորհրդով բանիւ, և գործով. Եւ ա՟մ մեղօք զոր գործեն մարդիկք. Մեղայ, մեղայ: Աղաչեմ զձեզ խնդրեցէք վ՟ս իմ յա՟յ զթողութիւն:

Պատասխանեսցեն որք մերձն են:

Ողորմեսցի քեզ ա՟ծ հզօրն և թողութ՟ի շնորհեսցէ ա՟մ յանցանաց քոց, անցելոյն և այժմուս, և յառաջակայէն փրկեսցէ և հաստատեսցէ յա՟մ գործս բարիս: Եւ հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանսն. Ամէն:

Պատասխանեսցէ և ինքն:

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն ա՟ծ, և թողցէ զա՟մ յանցանս ձեր տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք ս՟բ հոգւոյն հզօրն և ողորմածն և նմա փառք յաւիտեանս ամէն.

Դպիրքն.

Յիշեսջիր զմեզ Առաջի անմահ գառին ա՟յ:
Քահանայն:

Յիշեալ լիջիք Առաջի անմահ Գառին ա՟յ:

Դպիրքն: Սաղմոս. ՂԹ. փոխ:
Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր ծա'':

Սարկաւագն Քարոզէ:
Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր:

Քահանայն:

'Ի մէջ տաճարիս և առաջի ա՟ծ ընկալ և պայծառացեալ ս՟ր նշանացս և ս՟ր տեղւոյս խոնարհեալ երկեւղիւ երկիրպագանեմք, ս՟ր և զհրաշալի և զյաղթօղ զս՟րութ՟ին քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութ՟ի և զփառս ը՟ն հօր և ը՟ն հոգ[ւո]՟յ ս՟բ այժմ և'':

Քա

Քահանայն ասասցէ աղմոս․ ճը․ կցորդ․
Եւ ելցէ ՚ի լուսանն․

Մտից առաջի սեղանոյ․

Սարկաւագն փոխ․
Դատ արա ինձ Ած իմ եւ իրաւ արա ինձ․
Սարկաւագն քարոզէ․
Եւ եւս խաղաղութեան զտէր աղա՛․

Օրհնեսցուք զհայր տն մերոյ յի քի որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջս փառաբանութե եւ երգել զերգս հոգեւորս ամենա՛․

Քահանայն․

՚Ի յարկի սրբութե եւ ՚ի տեղւոջս փառաբանութե․ հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս առաջի ածընկալ եւ պայծառացեալ նր նշանացս եւ նր տեղւոյս խոնարհեալ երկիրպագանեմք․ զնր եւ զհրաշալի եւ զյաղթող զտէրութիդ քո օրհնեմք եւ փառաւորեմք․ եւ քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութի եւ զփառս ընդ հօր եւ ընդ հոգւոյդ սբյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

Իսկ եթէ [...] ալխակոյս լինիցի խորհրդատեան՝ ածցէ ՚ի վերայ ընծայիցն զպատարագի եմեփորոնն․ Եւ մատուցեալ առ ընծայարան սեղանոյն․ Եւ ՚ի ծունկս անկեալ յորդահոս արտասուօք լուռ եւ անմռունչ ասասցէ զաղօթս առ նր հոգին [...]ութեան գործոյն․

Գրիգորի Նարեկացւոյն․

ԱՄԵՆԱԿԱԼ, բարերար մարդասէր Ած բոլորից, յօրինող երեւութից եւ աներեւութից, փրկող եւ հաստատող, խնամող եւ խաղաղարար, հօր հզօր հոգ[...] հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութե՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ․

Մատչիմք մեծաւ դողութբ՝ սաստիկ երկիւղիւ մատուցանել․ նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի եւ արարչակցի՝ հայրենի անպարագրելի պատուոյդ, եւ քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ, էմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի եւ կենդանատուի եւ արարչի ամի․ ՚Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միաբնական ածութեդ, յորոց մի եւ դու ծանուցիս անհաս․

Քեւ եւ ՚ի ձեռն քոյ առաջինքն նահապետականն առհմին շառաւիղք սեռանողք անուանակոչեալք, զանցեալսն եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյեալսն, անբաւաճեռ բաշէր

բարբառով բանի վերապատմեցին։
Հոգին ոչ քաղցրեալ զքեզ Մով
սէսի, որ 'ի գնալն քո 'ի վերայ
ջրոյն՝ անպարագիր զօրութի, ա-
հեղ շրջարկութք աստծողականաւ
թեւապարփակ պաշտպանողօրէն
զթաւալեալ 'ի ծնունդս նորոգս՝
զանազանին խորհուրդ ծանուցեր։
Յոր կերպարան օրինակութեան՝
նախ քան զկառուցանել զլոյծ
մածուած վերջնում փարագուրդ
յօրինեցեր կարօղ տիրապէս զբո
վանդակ բնութիւս ամենից բնաւից
բոլորից զոյից ամ էից՝ յանէից։
Բաւ ստեղծանին 'ի նորոգութի
յարութեան ամ եղեալքս առ 'ի
քեն՝ յայնմ ժամանակի, որ է օր
վերջին՝ այսմ կենցաղի, և օր առա
ջին՝ երկրին կենդանեաց։ Քեզ
հնազանդեցաւ միութք կամացն՝
որպէս հօրն խորում, ազգակիցն
քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի
մերում կերպիւ ընդքեզ աւետա-
րանեաց ճշմարիտ ած՝ հաւասար
և համագոյ հօր իւր հզօրի. և զառ
'ի քեզ հայհոյութիւնն անբաւելի
քաղցրեաց, և իբր զմծամարտեալն
զքո հետեւորդն՝ չարաբանական
բերանս կարկեաց, եւ զեւրն շնորհ
եաց՝ արդարն և անարատն՝ զուխչն
ամի. որ վասն մեղաց մերոց մատ-
նեցաւ, և յարեաւ վասն զմեզ ար
դարացուցանելոյ։
Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ
բարեբանութիւն ընդ հօր ամենա
կալ յաւիտեանս յաւիտենից։

Դարձեալ կրկնեցից 'ի նոյն կարգ բանի, մին-
չև փառահունն վերահայեցողութե լուսոյ՝ հրա
շարժս յայտնեսցի։ Ազդեալ աւետարանեալ
վերստին կրկին զհապաղութիւն։

## ԱՂԱՉԱՆՔ

Ա և ալեբաւ մեք աբտասուա-
լից հառաչմամբ յամ անձնէ՝ ընդ
փառաւորին արարչին՝ անեղծ
և անստեղծ անժամանակ հոգւոյդ
զթածի, որ բարեխօսդ ես վն մեր
յանմռունչ հեծութիւնս՝ առ ո-
ղորմածդ հայր. որ զմեզն պահես,
և զմեղուցեալս մաքրես՝ և տա-
ճարս կազմես կենդանի և կեցու-
ցիչ կամաց բարձրելոյդ հօր։
Արդ՝ աղաչեմ զքեզ յամ անձնա
բուր գործոյ, որ ոչ է հաճոյ
քումդ բնակութե. և մի՛ շիջցես
առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլ
մունք 'ի տեսականացս աչաց իմա
տեաց. վասն զի զքեզ ուսաք միա-
նալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և
ըստ իր վարուց խնկելոց.
Նա

Եւ քանզի մինչ յերրորդութենդ պատարագել, եւ միւսդ ընդունել հաճեալ է մեզ հաշտարար արեամբ անդրանկին քոյ. եւ դու ընկալցես զմեր պաղատանս, եւ յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս ամ՛ պատրաստութե՛՝ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան:

Եւ հաւեսցի 'ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր, որ մարգարէին կենդանախառնեալ կայծակամբն՝ 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամի քոյդ քաւողեսցի գթութիւն, որպէս որդւոյդ ոյ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, եւ զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ որդեգրոյն երանութեան: Այո՛ այո՛՝ եւ ես մի եմ 'ի նոցանէ. եւ զիս ընկալ ընդ նոսին լեր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քո՛ ստացեալս:

Զի յայսմ ամ՛ յամի ծանիցի քո՛ ա՛ծութիւնդ՝ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս եւ 'ի մի իշխանութիւն զօրութե՛:

'ի Ձայն.

Զի քո՛ է գթութիւն, եւ կարողութիւն, եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Այս յարուցեալ գոյ առ ընծայարան սեղանոյն: Առ որ մատուցանէ նախաշարականագն զնշխարն:

Զոր առեալ Քահանայն դնէ 'ի մաղզմայն ասելով:

Յիշատակ տեառն մերոյ յի՛ քի՛
Որ բազմեալ հանգչի յանարուէստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք՝ գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ 'ի սկիհն ասելով:

Յաղագս յիշատակի փրկագործ ամօրէնութեան տն՛ տյ եւ փրկչին մերոյ յի՛ քի՛:
Որ 'ի կողմհաս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան. օրհնեցէք՝ գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Եւ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ. Յօհաննու Ոսկեբերանին:

Տէ՛ր ա՛ծ մեր որ զերկնաւոր հացդ զտէրն մեր յի՛ քի՛ զկերակուրդ ամ՛ աշխարհի՝ առաքեցեր փրկիչ

և կեցուցիչ և բարերար՝ օրհնել
և սրբել զմեզ · ինքնին դու տէր
օրհնեա՛ և այժմ զառաջադրութիւնս
զայս։

Ընկալ զսա յերկնային քո սեղան
Յիշեա՛ որպէս բարերար և մար-
դասէր զմատուցօղս և վասն որոյ
մատուցանի ։

Եւ զմեզ անդատապարտ պահեա՛
՚ի քահանայագործութիւն ածային
խորհրդոյ քոյ։

Զի քո է և փառաւոր է ամենապա
տիւ մեծ վայելչութիւն փառայդ
հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ
այժմ և''։

Եւ երգեսցէ ասելով. Սաղմոս. ղբ։

ՏՏ թագաւոր · Հաստա ·
Ամբարձան ։ Ի ձայնէ ։
Սքանչելի ։ Տան քում ։

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով։

Հոգին սբ̃ եկեսցէ ՚ի քեզ և զօ-
րութիւն բարձրելոյն հովանի լիցի
՚ի վերայ քոյ։

Եւ արկանէ զխունկն ասելով։

Խունկ մատուցանեմ առաջի քոյ
ք̃ս բուրումն հոգևորական ·
Ընկալ ՚ի սբ̃ յերկնային և յիմանա
լի քո մատուցարանդ ՚ի հոտ ա-
նուշից ·

Առաքեա՛ առ մեզ փոխարէն ըզ
շնորհս և զպարգևս հոգւոյդ սբ̃յ ·
և քեզ մատուցանեմք զփառս ընդ
հօր և ը̃ հոգւոյդ սբ̃յ այժմ և''։

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն իջանէ
հանդերձ սարկաւագօքն, և ելեալ ՚ի վեր երիցս
երկրպագեսցէ զսեղանն ։ Եւ նախասարկաւա-
գն ՚ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ ։

Օրհնեա՛ տէր ։

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ։

Օրհնեալ թագաւորութին
հօր և որդւոյ և հոգւոյն
սբ̃յ այժմ և''։

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշա
ճի աւուրն։ Եւ յաւարտելն՝ ձայնեսցէ նախա-
սարկաւագն։ Եւ ևս խաղաղութեն զտէր աղա-
չեսցուք ըն''։ Օրհնեա՛ տէր։

Եւ քահանայն ասասցէ։

Օրհնութիւն և փառք հօր և''։
Խաղաղութիւն ամենեցուն ·

Դպիրքն ·
Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն ·
Աստուծոյ երկրպագեսցուք։
Դպիրքն ·
Առաջի քո տէր։
Եւ քահանայն ասասցէ ՚ի Ձայն

Տէր ած մեր՝ որոյ կարողութիդ
անքննելի է · և փառքդ անհասանելի։
Որոյ ողորմութիդ անչափ է · և
գթութիւնդ անբաւ ·

Դու ըստ առատ մարդասիրութեանդ
քում, նայեա՛ց ՚ի ժողովուրդս քո
և ՚ի տաճարս այս սուրբ.

Ընդ որս ընդ մեզ և ընդ աղօթա-
կիցս մեր՝ առատապէս զողորմութիւն
քո և զգթութիւնս։

Զի քեզ վայելէ փառք իշխանու-
թիւն և պատիւ այժմ և միշտ և յա՛՛

Եւ սկսանին ասել դպիրքն սաղմոս և շարականս
ըստ պատշաճին։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ
զաղօթս ՚ի ծածուկ.

Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս
քո՛. և օրհնեա՛ զժառանգութիւնս
քո՛. զլրումն եկեղեցւոյ քո՛ պահ-
եա՛. սրբեա՛ զսոսա որք ողջունե-
ցին սիրով զվայելչութիւն տան քո։

Դու զմեզ փառաւորեա՛ Աստուածային
զօրութեամբ քով. և մի՛ թողուր ըզ
յուսացեալսն ՚ի քեզ.

Զի քո՛ է կարողութիւն և զօրու-
թիւն և փառք յաւի՛՛.

Խաղաղութիւն ամենեցուն.

Որ համարակից զայս և միաձայն
մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօ-
թել. և զերկուց և զերից միաբա-
նելոց յանուն քո՛ զխնդրուածս
պարգևել խոստացար։

Դու և այժմ զծառայից քոց զխնդ-
րուածս առ ՚ի յօգուտ կատարեա՛։

Շնորհելով մեզ յայսմ յաւիտե-
նիս զգիտութիւն քումդ ճշմար-
տութեան։

Եւ ՚ի հանդերձեալն զկեանսն յա-
ւիտենականս պարգևելով։

Զի բարերար և մարդասէր ես
Աստուած. և քեզ վայելէ փառք իշխա՛՛։

Եւ ՚ի փառք տալն դպրաց, երկրպագեսցեն ա-
ռաջի բեմին ամենեքեան։

Եւ քահանայն երկրպագելով սեղանոյն ասաս-
ցէ զաղօթս ՚ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յեր-
կինս զդասս և զզինուորութիւնս
հրեշտակաց և հրեշտակապետաց
՚ի սպասաւորութիւն փառաց քոց։

Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտա-
նել և սրբոց հրեշտակաց. և լինել
պաշտօնակից մեզ՝ և փառաբանա-
կից քում բարերարութեանդ։

՚Ի Ձայն։

Զի քո՛ է կարողութիւն, և զօ-
րութիւն, և փառք յաւիտ՛՛.

Եւ համբուրեսցեն զսեղանն։ Եւ սարկաւա-
գունքն գոչեսցեն։

Պրօսխումէ.

Եւ սարկաւագաց մի ոմն բարձրացուցանէ
զաւետարանն նոյն։

Եւ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն երգեն
զերեք սրբեանն։

Սուրբ Աստուած և հզօր և անմահ որ խաչե-
ցար և այլն։

Եւ քահանայն զոյգ սմին ասասցէ։



՚Ի

'Ի ծածուկ։

Տէր՝ որ 'ի սէրս հանգուցեալ ես, և եռեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ՝ և քերովբէք փառաբանեն. և ամ̃ երկնային զօրութ̃ք՝ քեզ երկրպագանեն։

Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամ̃ արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և նմանութեան. և ամ̃ շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն։

Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն այլ եդեր 'ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան։

Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայս քո 'ի ժամուս յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութ̃ սեղանոյ քոյ։

Եւ զօրհնաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։

Դու Տ̃ր՝ ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւն. և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութ̃բդ. թող մեզ զամ̃ յանցանս մեր զկամայ և զակամայս։

Սրբեա՛ զհոգի՝ զմիտս՝ և զմարմինս մեր. և շնորհեա՛ 'ի սրբութ̃ պաշտել զքեզ զամ̃ աւուրս կենաց մերոց։

Բարեխօսութ̃բ սրբուհւոյ ա̃ծածնին և ամ̃ սրբ̃ց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան։

Զի դու ես Տ̃ր ա̃ծ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա″։

Եւ 'ի կատարել երեքսրբենոյն և աղօթիցն՝ սարկաւագն քարոզէ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա″։

Վ̃ն խաղաղութեան ամենայն աշ″։

Եւ քահանայն՝ բազկատարած ասասցէ զաղօթս 'ի ծածուկ։

Տ̃ր ա̃ծ մեր՝ զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վեր ընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում։

Զգթութիւն քո առաքեա՛ 'ի վերայ մեր և ամ̃ ժողովրդեանս՝ որք ակն ունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ։

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրհնեա՛ տէր։

Եւ քահանայն ասասցէ 'ի ձայն։

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով և քեզ վայելէ փառք իշխանութ̃ի և պատիւ այժմ և″։

Յետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քահանայն և եկեալ բազմի յաստիճանն. և սկսանին դպիրքն սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն։

Եւ ընթերցցին զգիրս մարգարէականս և զառաքելականս



Եւ

Եւ զկնի ալէլուիայ, ըստ ցուցմանելոյ ընթերցուածոյն. և յաւարտմանն։

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրթի։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով։

☞ Խաղաղութիւն ամենեցուն.

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք։

Սարկաւագն.

Սրբոյ Աւետարանիս Որ ըստ Մատթէոսի։

Դպիրքն.

Փառք քեզ Տէր Աստուած մեր.

Սարկաւագն.

Պրօսխումէ։

Դպիրքն.

Ասէ Աստուած։

Եւ Սարկաւագն ընթերցցի զԱւետարանն Սրբոյ. Եւ յաւարտմանն ասասցեն Ամենեքեան։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւնն ՚ի լման։

ՀԱՒԱՏԱՄՔ ՚ի մի Աստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ՚ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։

Որով էառ մարմին հոգի և միտ. և զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ՚ի Սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն։

Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս

րէս և յաւետարանս ։
Որ էջն 'ի յորդանան քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ 'ի սրբսն։
Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի ։
'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։
'Ի յարութիւն մեռելոց։
'Ի դատաստանն յաւիտենից ։
Հոգւոց և մարմնոց յարքայութիւն երկնից, և 'ի կեանսն յաւիտենից։
Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սբ՟ հոգին. կամ թէ յոչ էից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին ա՟յ. և կամ զսբ՟ հոգին և թէ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական սբ՟ եկեղեցի ։

Լուսաւորչէն ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով սբ՟յ երրորդութեանն և մի ա՟ծութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սբ՟յ. այժմ և՛՛ ։

Սարկաւագն քարոզէ 'ի ձայն։
Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՛։
Դպիրքն տէր ողորմեա։

Եւ ևս հաւատով աղաչեմ՛։

Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ։

Տէր մեր և փրկիչ յս՟ քս՟ որ մեծ ես ողորմութբ՟, և առատ պարգևօք քաղցրութեան քո ։
Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու յղս՟ մեղաց մերոց։
Եւ պարգևեցեր առատապէս ըզ պարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։
Հաղորդս արա և զմեզ տր՟ աղաչեմք զքեզ ա՟ծային պարգևացդ. թողութեան մեղաց՝ և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ.

'Ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութբ՟ փառաւորել զքեզ ընդ հօր և սբ՟ հոգ՟՛՛.

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութբ՟ քով քս՟ փրկիչ մեր՝ որ 'ի վեր է քան զմիտս և զբանս
Ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամ՟ չարէ. Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՛ որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկրպագանեն. վասն զի ամենա

մեռանք երրորդութեանդ վայելէ փառք իշխա՛:

Օրհնեալ տէր մեր յս՛ քս՛. Ամէն.

Սարկաւագն.

Օրհնեա՛ տէր.

Քահանայն խաչակնքէ 'ի վերայ ժողովրդեանն ասելով 'ի Ձայն.

Տէր ած օրհնեսցէ զամենեսեան:

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոս իցէ 'ի բաց հանցէ զեմիփորոնն.

Սարկաւագն.

Սաղմոս ասացէք տեառն այ մե՛.

Դպիրքն ասեն զսրբասացութիւն ըստ խորհրդ դոյ աւուրն.

Սարկաւագն.

Մի՛ ոք յերախայից.

Դպիրքն.

Մարմին տէրունական.

Եւ գան խնկարկելով 'ի սուրբ խորհուրդն.

Սարկաւագն.

Ցարեւու եհար զնա՛.

Դպիրքն.

Եւ ցնծա նա որպէս հրս՛.

Եւ ապա եղանակեսցեն.

Որք զքերոբէից.

Այս 'ի Սարկաւագացն վերաբերիցի սրբազան հացն՝ և անմահութեան բաժակն 'ի սբ. սեղանն: Եւ մինչ նոքա երգեն՝ քահանայն խոնարհեսցի առաջի սբյ սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ:

Ո՛չ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել 'ի սեղան քո. կամ, սպասաւորել արքունական փառաց քոց. Քանզի պաշտել զքեզ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է.

Սակայն վասն անչափ բարերարութեան քո՝ անպարագրելի բանդ հօր եղեր մարդ՝ և քահանայապետ մեր երեւեցար:

Եւ իբր տր ամենեցուն այսմ սպասաւորութեան՝ և անարեան զենման՝ զքահանայութեան աւանդեցեր մեզ.

Վասն զի դու ես տր ած մեր որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց:

Որ 'ի վերայ քերոբէական աթոռոյ բազմիս. սերոբէից տր և թագաւոր իսրայէլի.

Որ միայն սբ ես և 'ի սբս հանգուցեալ:

Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալսելի. նայեա՛ յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո.

Եւ սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յամ պղծութէ չարին.

Եւ բաւականացո՛ զիս զօրութբ սբ հոգւոյդ որ զգեցեալ եմ զքահանայական շնորհս, կալ առաջի սրբոյ սեղանոյս և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ.

Քեզ

Թէպէտ խոնարհեցուցեալ զպարտանօք իմ, մեղօքն. մի դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի մերժեր զիս ՚ի ծառայից քոց։

Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցելոյ և յանարժան ծառայէս քումմէ։

Զանզի դու ես որ մատուցանես և մատչիս, և ընդունիս, և տաս Քս̃ ած̃ մեր։

Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն Հօրդ և ամենասուրբ և բարերար Հոգւովդ. այժմ և միշտ և յաւէ՛։

Եւ ընծայքն վերաբերելն ՚ի սեղանն։

Եւ քահանայն խնկեսցէ և լռեսցէ զմատուցմանն առնելոյ։

Լուացեալ սրբութեամբ զձեռս։

Սարկաւագն։

Եւ ես խաղաղութեան զոհէր աղա՛։

Եւ ես հաճատով և սրբու՛։

Մինչ նոքա քարոզեն. Քահանայն բաղկատաբած աղօթեսցէ ՚ի ծածուկ։

ՏԷՐ ԶՕՐՈՒԹԵՑ և արարիչ ամ՛ լինելութեանց։

Որ յանէութէ զընաւս ՚ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր։

Որ և զմերս զհողեղէն բնութիւ

պատուեալ մարդասիրապէս։

Այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւոր։

Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագիս ընկալ առ ՚ի մէնջ զառաջադրութիւս զայս, և աւարտեա զսա ՚ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս։

՚ի Ձայն։

Շնորհօք և մարդասիրութե̃ տն̃ մերոյ և փրկչին յի̃ քի̃. ը̃ որում քեզ Հօր միանգամայն և Հոգւոյդ սբ̃յ վայելէ փառք իշխա՛։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ Ա̃յ երկիրպագեսցուք։

Դպ Առաջի քո տէր։

Սրկ Ողջոյն տուք միմեանց ՚ի համ՛։

Դպ Քս̃ ՚ի մէջ մեր յայտնե՛։

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս. և սարկաւագն ձայնեսցէ։

Ահիւ կացցուք երկիւղիւ կաց՛։

Դպ Առ քեզ աստուած։

Սրկ Պատարագ Քս̃ մատ՛։

Դպ Ողորմութիւն և խաղաղու՛։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ՚ի Ձայն։

Շըն

Շնորհք, սէր և ածային օրհնաբար զօրութիւնն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

☞ Եղիցի ընդ ձեզ է ամենեսեան։

Դպ Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սրկ Զդրունս զդրունս ամ՛։

Դպ Ունիմք առ քեզ տէր ամենակալ։

Սրկ Եւ գոհացարուք։

Դպ Արժան և իրաւ։

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն ձեռնամած աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայօրդոր փութով միշտ երկրպագանելով փառաւորել ըզքեզ հայր ամենակալ։

Որ զքոյին անզննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր ըզկրճիմն։

Նոր ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփհականեաց զհաւատացեալս ՚ի քեզ։

Եւ զննելի բնութեամբ ըստ ՚ի կուսէն տնտեսութեան՝ հաճեցար բնակել ՚ի մեզ։

Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար

Վասն զի որում ո՛չն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ՚ի փայլատակցայտ և յանմատոյց լուսոյ ածուեդ.

Եղեալ այդպիսիդ մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

՚ի Ձայն։

Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Դպիրքն։

Սբ սբ սբ տէր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քո օրհնու՛։

Մինչ նոքա երգեն. Քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ։

Սբ սբ՝ սբ ես ճշմարտապէս և ամենասբ. և ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ՚ի մեզ զանբաւ բարեգործութեան զեղմունս։

Որ և անդէն իսկ ՚ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք՝ խնամեալ մխիթարեցեր։

Մարգարէիւք, օրինացն տուչութ՛, քահանայութեամբ, և ըստուերակերպ երինջուցն մատուցմամբ։

Իսկ ՚ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիքս։

Տուր մեզ զորդիդ քո միածին, պարտապան և պարտս· զենումն և օծեալ· զառն և երկնաւոր հաց· քահանայապետ և պատարագ։

Վասնզի ինքն է բաշխօղ· և նոյն ինքն բաշխի 'ի մէջ մերում միշտ անծախապէս։

Վասն զի եղեալ հաճաստեաւ և առանց ցնորից մարդ· և անշփոթ միաւորութբ մարմնացեալ յածածնէն և 'ի սբ կուսէն մարիամայ։

Ճանապարհորդեաց ընդ ամ կերպս մարդկային կենցաղոյս առանց մեղաց։

Նա յաշխարհակեցայցն՝ և առիթն փրկութեան մերոյ՝ եկեալ կամաւ 'ի խաչ։

Առեալ զհացն՝ 'ի սբ յածային յանմահ՝ յանարատ՝ և յարարչագործ՝ 'ի ձեռս իւր· օրհնեաց՝ գոհացաւ եբեկ՝ և ետ իւրոց ընտրեալ սբ և բազմաց աշակերտացն ասելով·

'ի Ձայն·

Առէք կերէք Այս է ՄԱՐՄԻՆ ԻՄ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութի մեղաց·

'ի ծածուկ։

Նոյնպէս և զբաժակն առեալ·

Օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ իւրոց ընտրեալ սբ և բազմաց աշակերտացն ասելով·

'ի Ձայն·

Արբէք 'ի սմանէ Ամենեքեան·
ԱՅՍ Է ԱՐԻՒՆ ԻՄ՝ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց·

'ի ծածուկ·

Նա զայն միշտ իւր յիշատակ առնելով, պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո միածին։

Նա իջեալ 'ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ·

Նա զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս։

Ըզքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ ած՝ զածդ կենդանեաց և մեռելոց·

Եւ առնու զնծայսն 'ի ձեռն
Եւ ասասցէ 'ի ծածուկ

Նա արդ մեք տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ·

Յիշեմք զդորա որ վասն մեր ըզ փրկագործ չարչարանսն·



8Z62-5Z 1005
ГОС. ПУБ. БИБЛИОТЕКА ... ССР А. им. А. МЯСНИКЯНА

Ըզկենսատու խաչելութիւնն։
Զերեք օրեայ թաղումնն։
Զերանելի յարութիւնն։
Զաստուածապէս համբարձումնն։
Ընստելն ընդաջմէ քո Հայր
Զահաւոր և զփառաւորեալ ըզ միւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

Եւ զնծայման սակաւ ինչ բարձրացուցեալ մատուցէ առ Հայր։
Եւ դիցէ 'ի վերայ սրբոյ սեղանոյն ասելով 'ի Ձայն։

Եւ զքոյս` 'ի քոյոց` քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն։

Դպ. Յամենայնի օրհնեալ ես տէր։

Մինչ նոքա երգեն` Քահանայն բազկատարած ասասցէ 'ի ծածուկ։

Զքեզ արդարև տէր Աստուած մեր գովեմք. և զքէն գոհանամք հանապազ.
Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս. այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։
Ո՛չ յաղագս մերոյ ինչ բարեգործութեանց, յորոյ յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ.
Այլ 'ի քո բազմապեղ ներողութեան ցանգ ապաւինեալ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայել է փառք իշ''։

'ի Ձայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։
Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։
Դպ. Առաջի քոյ տէր։

Մինչ նոքա երգեն` Քահանայն խոնարհեալ երկրպագէ սեղանոյն և ասասցէ։

Երկրպագանեմք` և աղաչեմք` և խնդրեմք 'ի քէն բարերար Աստուած։
Առաքեա 'ի մեզ և յառաջի եդեալ ընծայս այս` զմշտնջենաւորակից քո և զէակից սուրբ հոգիդ.

Դպ. Որդի Աստուծոյ որ պատարագ։

Եւ կացեալ սարկաւագն առ ընթեր քահանային երկիւղիւ և դողութեամբ մեծաւ։ Եւ ասասցէ 'ի ցած Ամէն օրհնեա տէր։ Եւ քահանայն խաչակնքեսցէ զնծայման ասելով 'ի ծածուկ։

## ՈՐՈՎ ԶՀԱՑՍ

☞ օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

☞ Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ
եւ փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ
եւ փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ
եւ փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ
եւ փրկչին յի քի։

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ մարմին եւ արիւն ճշմարտապէս արասցես տն մերոյ եւ փրկչին յի քի փոխարկելով հոգւովդ քով սրբով։

Երիցս կրկնեսցէ։

Ապա ասասցէ 'ի Ձայն։

Որպէս զի եղիցի սա ամցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութի 'ի քաւութի եւ 'ի թողութի մեղաց։

Եւ քահանայն այսուհետեւ ոչ բարձրագոյն քան զնծայման զձեռսն իւր տարածեալ, այլ խոնարհագոյն։ Եւ զաչսն 'ի նոյն յառեալ աղօթեսցէ 'ի ծածուկ։

Սոյնպէս շնորհեա զսէր զհաստատութի եւ զղձալի զխաղաղութիւն ամ աշխարհի։





Սրբոյ եկեղեցւոյ եւ ամ ուղղափառ եպիսկոպոսաց։ Քահանայից։ Սարկաւագաց։ Թագաւորաց։ Աշխարհի։ Իշխանաց։ Ժողովրդոց։ Ճանապարհորդելոց։ Նաւելոց։ Կապելոց։ Վըտանգելոց։ Աշխատելոց։ Եւ որք 'ի պատերազմունս բարբարոսաց։ Սոյնպէս եւ օդոց շնորհեա զբարեխառնութիւն. եւ անդոց զպտղաբերութիւն։ Եւ ախտացելոց 'ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն։ Սոյնպէս հանգո՛ զամենեսեան յառաջագոյն 'ի քս զննջեցեալսն։

Ը զնախահարս։ Ը զհայրապետս։ Ը զմարգարէս։ Զառաքեալս։ Զվկայեալս։ Զեպիսկոպոսունս։ Զերիցունս։ Զսարկաւագունս։ Եւ զբնաւ ուխտ եկեղեցւոյ քո սբ։ Եւ զամենեսեան յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս։

'ի Ձայն։

Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար ած աղաչեմք։

Դպիրքն։

Յիշեա տէր եւ ողորմեա։

Քահանայն։

Աձ

Ածածնին սբյ կուսին մարիամու. Եւ յովհաննու մկրտչին. Ստեփաննոսի նախավկային. Եւ ամ սբց եղիցի յիշատակ 'ի սբ. պատարագս աղաչեմք.

Դպիրքն.

Ցնծեա տէր և ողորմեա՛

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն Ձեռնամած Ասասցէ.

Առաքելոց սրբոց մարգարէից.

Եւ մինչ նորա երգեն զքարոզս քահանայն ասասցէ զաղօթս զի 'ի միասին աւարտեսցին.

Ցնծեա տէր և ողորմեա, և օրհնեա զքո կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի քո.

Զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ. և ազատեցեր խաչիւն սրբով.

Շնորհեա սմա զանշարժ զխաղաղութիւն.

Ցնծեա տր և ողորմեա, և օրհնեա զամ ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութբ համառօտեն 'ի մեզ զբանն ճշմարտութեան.

'ի Զայն.

Եւս առնել զեպիսկոպոսապետն մեր, և զպատուական հայրապետն ամ հայոց զտր (այս անուն) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ.

Եւ դարձեալ սարկաւագն գայ 'ի տեղի իւր. Եւ քարոզեսցէ բարձր.

Գոհութիւն և փառաբանութիւն մա".

Մինչ նորա քարոզեն Քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ.

Ցնծեա տր և ողորմեա, և օրհնեա զքո աւաջնիկացն ժողովուրդս և զպատարագիս մատուցողս.

Եւ պարգևեա սոցա զպիտոյսն և զօգտակարսն.

Ցնծեա տէր և ողորմեա, և օրհնեա զուխտաւորս և զպտղաբերս Եկեղեցւոյ քում սրբոյ. և որք յիշեն զաղքատս ողորմածութբ.

Եւ հատո նոցա զպարտս նոցա ըստ ընդարձակ առատութեան քում հարիւրապատիկ աստ և 'ի հանդերձելումն.

Ցնծեա տր և ողորմեա, և դթա 'ի հոգիս հանգուցելոցն. Հանգո զնոսա և լուսաւորեա՝ և դասաւորեա ընդ սբս քո յարքայութեն երկնից. և արժանի արա ողորմութե քում.

Ցնծեա տր և զհոգի ծառայիս քոյ (այս անուն.) և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութե քում, և հանգո այցելութբ 'ի լոյս երեսաց քոց.

Եւ թէ կենդանի է՝ Փրկեա զնա յամ

յամ որոգայթից հոգւոյ և մարմ-
նոյ։

Յիշեա՛ Տէր և զայնոսիկ որք յանձ-
նեցին մեզ յիշատակել յաղօթս,
զկենդանիս և զհանգուցեալս. և
կատարեա՛ զկամս հայցմանց նց
և զմեզ, ընդ ուղղորդն և որ լի՛ն
է փրկութիւն։

Եւ՛ վարձատրեա՛ բոլորեցունց զա-
նանց և զերանելի բարութիւնդ։

Եւ՛ զտեսալ զխորհուրդս մեր տա-
ճարացս յընդունակութիւն մարմնոյ
և արեան միածնի քո Տն մերոյ և
փրկչին յի քի. ընդ որում քեզ
հօր ամենակալի հանդերձ կենդա-
նարար և ազատիչ սուրբ հոգւովդ
վայելէ փառք ի՛՛։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և
ասասցէ ’ի Ձայն։

Եւ՛ եղիցի ողորմութիւն մեծին Այ
և փրկչին մերոյ յի քի, ընդ ձեզ.
ընդ ամենեսեանդ.

Դպ. Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Ամէն և ես խաղաղութեան զոհեր ա՛՛։

Ամենայն սրբովք զորս յիշատա-
կեցուք եւս առա՛՛։

Վասն մատուցեալ սուրբ և՛՛։

Մինչ սարկաւագն քարոզէ՝ քահանայն ասասցէ
’ի ծածուկ։

Ած ճշմարտութե՛ և հայր ողոր-
մութե՛՝ գոհանամք զքէն.

Որ ’ի վեր քան զերանելի նահա-
պետացն, զմեր պարտաւորեալս ա-
ռաւել մեծարեցեր զշնութիւն.

Վասն զի նոցա Ած կոչեցար. իսկ
մեզ՝ հայր հաճեցար անուանիլ
գթալով.

Եւ՛ այժմ Տէր աղաչեմք զքեզ,
զայսպիսի առ ’ի քէն շնորհ և
զպատուական անուանադրութեանս
շնորհ.

Օրըստօրէ պայծառացուցեալ
ծաղկեցո ’ի մէջ եկեղեցւոյ քում
սրբոյ։

’ի Ձայն.

Եւ՛ տուր մեզ համարձակաձայն
բարբառով բանալ զբերանս մեր
կարդալ զքեզ երկնաւոր հայր եր-
գել և ասել.

Եւ Դպիրքն Բազկատարած Եղանակեսցեն։

Հայր մեր որ յերկինս ես սբ եղի՛՛։

Մինչ նոքա երգեն՝ քահանայն աղօթեսցէ
’ի ծածուկ։

Տէր տէրանց Ած աստուածոց. թա-
գաւոր յաւիտենական. արարիչ
ամ արարածոց, հայր Տն մերոյ
յի քի.

Մի՛ տար զմեզ ’ի փորձութիւն,
այլ

այլ փրկեա՛ 'ի չարէ և ապրեցո՛ 'ի փորձութենէ ։

'ի Ձայն ։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Դպիրքն ։

Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։

Այ երկրպագեսցուք ։

Դպիրքն ։

Առաջի քո տէր ։

Սարկաւագն ։

Օրհնեա՛ տէր ։

Քահանայն խոնարհեցելի և ամ ժողովուրդն չոքելի 'ի ծունկս ։

Եւ Քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ ։

Որ աղբիւրդ ես կենաց և բղխումն ողորմութե հոգւոյդ սբ ։

Ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն մեծութե քում ։

Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի ։

Առ 'ի ժառանգութիւն և 'ի վիճակ հանդերձելոցդ բարեաց ։

'ի Ձայն ։

Քրիստոսիւ Յիսուսիւ Տրամբ մերով ։ ընդ որում քեզ հոգւոյդ սբյ և հօր ամենակալի վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և'' ։

Եւ քահանայն առցէ զսուրբ հացն 'ի ձեռն ։
Եւ սարկաւագն ձայնեսցէ բարձր ։

Պրօսխումէ ։

Եւ քահանայն բարձրացուցանէ ակներև ամ ժողովրդեանն ։

Եւ ասասցէ 'ի Ձայն

'ի Սրբութիւն Սրբոց ։

Դպիրքն Բարձր Ձայնիւ ։
Միայն սբ, միայն տր, յս քս'' ։
Քահանայն

Օրհնեալ Հայր Սուրբ Ած Ճշմարիտ ։

Դպիրքն ։ Ամէն ։
Քահանայն ։

Օրհնեալ Որդիդ Սուրբ Ած Ճշմարիտ ։

Դպիրքն ։ Ամէն ։
Քահանայն ։

Օրհնեալ Հոգիդ Սուրբ Ած Ճշմարիտ ։

Դպիրքն ։ Ամէն ։
Քահանայն ։

Օրհնութիւն և Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, Այժմ ։

Դպիրքն Ամէն ։

# Հայր Ս՟բ Որդի Ս՟բ Հոգի Սուրբ Օրհն՟:

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խոնարհեսցի և աղօթեսցէ ՚ի ծածուկ:

Նայեաց Տ՟ր մեր Յ՟ս Ք՟ս յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ. եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ Որ ը՟ն Հօր նստիս և աստ պատարագիս:

Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և ՚ի պատուական արենէ. և ՚ի ձեռն մեր ա՟մ ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ երկիրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն:
Եւ առեալ զՍ՟բ Մարմինն ողջ թացցէ յանապական Արիւնն և Ասասցէ:

Տ՟Ր Ա՟Ծ մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս. և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն ՚ի թողութիւն մեղաց. և արժանի արարեր զմեզ հաղորդել ս՟բ մարմնոյ և արեան միածնի քո:

Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր՝ արա՛ զմեզ արժանի ընդունել զս՟բ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն:

Եւ գոհութ՟բ փառաւորել. զքեզ ը՟ Որդւոյ և ս՟բ Հոգւոյդ այժմ":



Եւ բարձրացուսցէ ահներև ժողովրդեանն և ասասցէ ՚ի Ձայն:

Ի ս՟բ ՚ի ս՟բ պատուական մարմնոյ և յարենէ տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի Ճաշակեսցուք սրբութ՟բ որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերում: Սա է Կենաց, Յոյս, Յարութ՟ն, Քաւութ՟ն, Եւ թողութ՟ն մեղաց: Սաղմոս ասացէք տ՟ն ա՟յ մերոյ: Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի ՚ի կառս քերովբէականս:

Սարկաւագն ձայնեսցէ:

Սաղմոս ասացէք տ՟ն ա՟յ մերում:

Եւ Դպիրքն Եղանակեսցեն:

Ք՟ս պատարագեալ բաշխի ՚ի մ՟ջ":

Մինչ նոքա երգեն, Քահանայն առցէ զՄարմինն ՚ի ձեռն: Եւ համբուրեսցէ Արտասուօք Ասելով:

Զոր Օրհնութիւն, կամ զոր Գոհութիւն ՚ի վերայ Հացիս Եւ բաժակիս ասասցուք: Այլ յ՟ս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ այ":

Դարձեալ ասասցէ:

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես քրիստոս որդի ա՟յ, որ բարձեր զմեղս աշխարհի:

Եւ

Եւ ընկեալ արկցէ 'ի բաժակն Արեան ասելով։

Լրումն Հոգւոյն Սրբոյ․

Եւ ապա Առեալ զմի մասն 'ի ձեռն Ասասցէ արտասուօք և գոհութեամբ առ Հայր և Որդի 'ի ծածուկ։

ՀԱՅՐ ՍՈՒՐԲ որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քոյ․ Եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին․

Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն․ տպաւորեա՛ 'ի մեզ ըզ շնորհս հոգւոյդ սրբոյ, որպէս 'ի սուրբ առաքեալսն որք ճաշակեցին և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի․

Եւ արդ՝ տէր հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մանաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն բառնալով զխաւար մեղաց․ մի հայեր յանարժանութիւնս իմ․ և մի արգելցես զշնորհս հոգւոյդ սրբոյ

Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում, պարգևեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց․

Որպէս խոստացաւ և ասաց տէրն մեր յիսուս քրիստոս թէ՝ ամենայն որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեցցէ 'ի յաւիտեան։

Արդ՝ արա զսա մեզ 'ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյդ և Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս․

Խաղաղութիւն ամենեցուն։

Գոհանամ զքէն քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան քոյ․ Եւ այժմ աղաչեմ զքեզ մի լիցի սա ինձ 'ի դատապարտութիւն այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց․ առողջութիւն հոգւոյ և մարմնոյ․ և 'ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան։

Որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ․ և զհոգի և զմարմին իմ։

Եւ արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ երրորդութեանդ։ Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ այժմ։

Յօհաննու Ոսկեբերանին Ասացեալ Աղօթք։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տէր աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել աստուածային և սոսկալի խորհրդոց քում․ անարատ մարմնոյդ և պատուական արեանդ․ վասն այսորիկ զսոսա

զնոսա 'ի բարեխօսութիւն ունե-
լով, աղաչեմ յամ աւուրս և 'ի
ժամանակս կենաց իմոց ընդ սրբու-
թե քո պահեա զիս:

Ով զի յիշելով զբարեգթութիւնս
քո և կենդանի եղէց ընդ քեզ:

Որ վասն մեր չարչարեցար և մե-
ռար և յարեար. մի մերձեսցի տր
իմ և ած խորտակիչն, կնքելով ան-
ձին իմոյ պատուական Արեամբդ
քով:

Ամենակարող մաքրեա զիս աղօք
յամ մեռելոտի գործոց իմոց, որ
միայնդ ես անմեղ:

Ամրացո զկեանս իմ տէր, յամ փոր-
ձութէ. և զպատերազմօղն իմ
դարձո յինէն յետս, պատկառեալ
և ամաչեցեալ որչափ յառնէ 'ի
վերայ իմ:

Ամրացո զգնացս մտաց և լեզուի
իմոյ, և զամ ճանապարհս մարմ-
նոյ իմոյ:

Տէր հանապազորդ ընդ իս, ըստ ան-
սուտ խոստմանց քոց, թէ որ ու-
տէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն
իմ, նա յիս բնակեսցի և ես 'ի նմա:

Դու ասացեր մարդասէր, կացո
զբանս ածային անլուծանելի հրա-
մանաց քոց.

Քանզի դու ես ած ողորմութե,
և գթութեան և մարդասիրութե
և պարգևիչ ամ բարեաց. և քեզ
վայելէ փառք հանդերձ հարբդ և
ամենասբ հոգւովդ այժմ և միշտ'':

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն. և խնդրեսցէ
'ի Ճշմարտէն այ զդէպս հայցուածս անձին
իւրոյ. և ժողովրդեան, և աշխարհի. և թողու-
թի խնդրեսցէ իւրոց յանցաւորացն . թշնամ-
եացն և ատելեացն: Եւ անդէն ահիւ և դողու-
թբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն . և արբցէ 'ի բա-
ժակէն ասելով:

Հաւատով հաւատամ յամենայն
երրորդութիւնդ 'ի հայր և յորդի և
'ի հոգիդ սբ:

Հաւատով ճաշակեմ զսբ և ըզ
կենդանարար և զփրկագործ Մար
մինս քո քս ած իմ յա 'ի թողու-
թիւն մեղաց իմոց:

Հաւատով ըմպեմ զսրբարար և
զմաքրիչ արիւնս քո քս ած իմ
յա 'ի թողութիւն մեղաց իմոց:

Մարմին քո անապական լիցի ինձ
'ի կեանս:

Եւ սբ արիւն քո 'ի քաւութիւն
և 'ի թողութիւն մեղաց:

Եւ սարկաւագն հաղորդեսցի. և յետ հաղորդե-
լոյն գոչէ առ ժողովուրդն և ասէ բարձր:

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատ':

Եւ Դպիրքն Բարձր ձայնիւ.

Աստուած մեր և տէր մեր երև':

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն բայց ոչ՚ի բերանն, այլ յափըն տալով զսրբութիւնն. և ամ արժանաւորքն հաղորդեսցին. և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն ընծայիւն և ասասցէ.

Կեցո՛ տր զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւնս քո՛. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Եւ Դպիրքն Երգեսցեն.

Լցաք 'ի բարութեանց քոց տէր ձա''.

Քահանայն ասասցէ 'ի ծածուկ.

Գոհանամք զքէն հայր ամենակալ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սբ եկեղեցի, տաճար սրբութեան ուր փառաբանի անունն սբ երրորդութեանդ.

Ալէլուիա.

Գոհանամք զքէն քս թագաւոր՝ որ պարգևեցեր մեզ կենդանութի կենարար մարմնով և արեամբ քով սրբով. Շնորհեա՛ զքաւութիւն և զմեծ ողորմութիւն.

Ալէլուիա.

Գոհանամք զքէն հոգիդ ճշմարիտ՝ որ նորոգեցեր սբ եկեղեցի. Անարատ պահեա՛ հաւատով երրորդութեանդ յայսմհետէ մինչև յաւիտեան.

Ալէլուիա.

Սրկ Եւ ևս խաղաղութեան զտէր աղա''.

Եւ ևս հաւատով ընկալեալք ածա''.

Դպ Գոհանամք զքէն տէր որ կե''.

Քահանայն ասասցէ 'ի ծածուկ.

Գոհանամք զքէն քս ած մեր որ զայսպիսի ճաշակումն բարութե շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան։

Սովիմք պահեա՛ զմեզ սուրբ և անարատ, բնակեալ զմեօք քո՛ ածային խնամօքդ.

Հովուեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և բարեսիրաց.

Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեանց, քում և եթ արժանի եղիցուք լսել ձայնի.

Եւ քեզ միայն քաջայաղթ և ճշմարիտ հովուի հետևիլ.

Եւ առ 'ի քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից.

Ած մեր և տր մեր և փրկիչ յս քս Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սբ հոգւոյդ այժմ և''.

Խաղաղութիւն ամենեցուն.

Անքննին, անհաս, երրեակ ինքնութեդ, հաստիչ, ընդունող, և անբաժանելի, միասնական սբ երրորդութեդ, վայելէ փառք իշխանութիւն և''.

Եւ ապա առցէ զաւետարանն որ ՚ի ձեռն իւր։ Եւ երիցս երկրպագելով համբուրեսցէ զսուրբ աւետարանն ։ Եւ իջանելով ՚ի մէջ եկեղեցւոյն ասասցէ զաղօթս ՚ի Ձայն

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ տր՝ և որք առնես զյուսացեալս ՚ի քեզ. կեցո՛ զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւն քո՛։

Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա՛. Սրբեա՛ զսոսա որք ողջունեցին զվայելչութիւն տան քոյ.

Դու զմեզ փառաւորեա՛ ածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս ՚ի քեզ։

Զխաղաղութիւն պարգևեա՛ տր աշխարհի.

Եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորաց մանկանց նոցա. և ամ ժողովրդեանս։

Զի ամ տուրք բարիք. և ամ պարգևք կատարեալք, ՚ի վերուստ են իջեալք առ ՚ի քէն.

Որ ես հայր լուսոյ և քեզ վայելէ փառք իշխան՝.

Եւ Դպիրքն Ասասցեն Երիցս.

Եղիցի անուն տեառն օրհնեալ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ ՚ի Ձայն.

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քս ած փրկիչ մեր.

Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւնս քո։

Լից և զմեզ հոգւովդ քով սրբով.

Սաղմոսագն.

Օրհն.

Քհ Խաղաղութիւն ամենեցուն.

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ Երկիւղածութեամբ լուարուք.

Սուրբ Աւետարանիս որ ըստ Յովհաննու. Գլուխ Առաջին. Համար մէկ

՚ի հօրէ լուսոյ.

ԻՍԿԶԲԱՆԷ ԷՐ բանն. և բանն էր առ ած և ած էր բանն. Նա էր ՚ի սկզբանէ առ ած.

Ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղեն.

Նովաւ կեանք էր. և կեանքն էր լոյս մարդկան.

Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ. և խաւար նմա ոչ եղև հասու.

Եղև այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յովհաննէս.

Սա եկն ՚ի վկայութիւն զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ.

Ո՛չ էր նա՛ լոյսն այլ զի վկայեսցէ վասն լուսոյն.

Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զա՟մ մարդ որ գալոց է յա՟շ.

Յաշխարհի էր. և աշխարհ նովաւ եղև. և աշխարհ զնա ո՛չ ծանեաւ.

Յիւրսն եկն և իւրքն զնա ո՛չ ընկալան.

Իսկ որք ընկալանն զնա՛ ետ նոցա իշխանութիւն որդիս ա՟յ լինել. որոց հաւատասցեն յանուն նորա.

Ոյք ո՛չ յարենէ, և ո՛չ ՚ի կամաց մարմնոյ և ո՛չ ՚ի կամաց առն այլ յաստուծոյ ծնան. Եւ Բանն ՄԱՐՄԻՆ եղև և բնակեցաւ ՚ի մեզ.

Եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ ՚ի հօրէ լի՛ շնորհօք և ճշմարտութ՟բ.

Ա՟ռ Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր.

Պ՟հ Պահպանեա՛ զմեզ Ք՟ս.

Ա՟ռ Օրհնեցից զտէր յա՟մ ժամ.

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր.

Օրհնեալ եղերուք ՚ի՛՛.

Եւ դպիրքն ասասցեն.

՚Ի տէր պարծեսցի անձն իմ.

Եւ ընդ սաղմոսելն դպրաց՝ բաշխեսցի նշխար.
Եւ յաւարտմանն Քահանայն դարձցի յարևելս
Եւ երկրպագեսցէ առաջի ս՟բյ սեղանոյն երիցս և ասասցէ.

Տ՟Ր յա՟ծ ողորմեա՛ ինձ.

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ՚ի զգեստուցն. Եւ երթիցէ խաղաղութ՟բ.

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 180[illegible] [illegible] 15

[illegible]

